

ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՀԻՇԱԿԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴՄԻՏՐԻ ՆԻԿՈՂԱՅՈՒՄ
Պատմական գիտությունների թեկնածու

ԽԱՅԱՉԱ-Ազգի ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԾ ՏԱՐԱԾՔԸ, ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Խայաչա-Ազգի պետությունը քաղաքական ասպարեզ է եղել մ.թ.ա. XV դարի վերջին՝ խեթական պետության թագավոր Թութխալիս III-ի (1410-1380) ժամանակից: Հաշվի առնելով, որ Նախրի ցեղամիտությունը, որը քաղաքական ասպարեզ է եղել մ.թ.ա. XIII դարից¹, եթե դեռ իր գլուխությունն էր շարունակում Խայաչա-Ազգի պետությունը, տարածված էր Վերին Եփրատից անմիջապես արևելքը, ուստի Խայաչա-Ազգին, որն իր տարածքով դարձալ առնչվում էր Վերին Եփրատի հետո, բնականաբար գտնվել է այդ գետից արևմտոց: Նրան արևմտուքից սահմանակից է եղել խեթական պետությունը, իսկ հյուսիս-արևմուտքից՝ կասկերի երկիրը: Փատորեն Խայաչա-Ազգին արևելյան և արևմտյան սահմանները որոշակի են: Ինչ վերաբերում է նրա հյուսիսային և հարավային սահմաններին, ապա դրանցից առաջինը ձգվել է մինչև Սև ծովի հարավային ափերը, որտեղ գտնվել է Խայաչա-Ազգի Արիփաս քաղաքը², ինչ երկրորդը հասել է մինչև Վերին Եփրատի ոլորտանի հյուսիսային կողմերը³, այսինքն՝ Նախրի ցեղամիտությունից դեպի հյուսիս-արևմուտք և աքքադական արձանագրությունների Խաթե կամ Հայ պետության հյուսիս-արևելյան, ինչպես նաև նրա արևելյան շարունակությունը ներկայացնող ուրարտական արձանագրությունների Խաթե կամ Հայ ցեղամիտության հյուսիսային կողմերը: Երկրին տրվող Խայաչա աճվան հիմքում ակներևաբար ընկած է այդ երկրից հարավ ձգվող տարածքում գտնվող շումերա-աքքադական ժամանակաշրջանի Խաթե մայր ցեղի հայերեն հնչարտաբերված «Խայ» կամ «Հայ» արմատը («շա»-ն կամ «աշա»-ն տեղածանց է, որին համապոր է «աա»-ն կամ «ասա»-ն): Նկատի ունենալով, որ Խայաչան երկրանվան «Խայ» կամ «Հայ» արմատը բխում է հներկվողական ծագում ունեցող Խաթե կամ Հայ էթնոնիմից, որի տակ հիշշատակվող բնակիչներն ունեցել են հներկվողական, մասնավորապես հայկական ծագում, կարելի է ասել, որ ինչպես Խայաչա կամ Հայասա երկրանվանը, այնպես էլ այդ անոնվ կոչված երկրի բնակիչները նույնպես ունեցել են հներկվողական, մասնավորապես հայկական ծագում: Փատորեն շումերա-աքքադական դարաշրջանի Խաթեն եղել է մայր ցեղ ինչպես Խայաչայի կամ Հայասայի աճվան, այնպես էլ նրա բնակչության էթնիկական ծագման հետ կապված: Խայաչա-Ազգին բնակչությունը, լինելով շումերա-աքքադական դարաշրջանի Խաթե պետության բնակչության արևելյան հատվածի մի մասը, բնակվել է Վերին Եփրատից մինչև Սև ծովը ձգվող տարածությունում ապավինությունը Պոն-

¹ Г. А. Капапյян, Хайаса колибелъ армян, Ереван, 1947, стр. 80-83.

² J. Garstang and O. R. Gurney, The Geography of the Hittite Empire, London, 1959, p. 82.

³ И. М. Дьяконов, Предистория армянского народа, стр. 82-83, прим. 16.

տական լեռներին (Այսուհետև շարադրանքում Խայաշայի փոխարեն կօգտագործենք Հայաս ձևը):

Ենթադրվում է, որ սկզբնական շրջանում Հայաս-Ազգի մեջ մտնող Հայաս և Ազգի ցեղային երկրները կազմել են մի ցեղամիություն, ինչպես Նախի ցեղամիության մեջ մտնող երկրները, իսկ հետագայում, հավանաբար Թության լիան Մամանակից, նրանք միացել են և ստեղծել կենտրոնական պետություն՝ իր արքայական դիմաստիալով, իր գործով, հավանաբար նաև իր արքայական քաղաքով (թեև վերջինին մասին տեղեկություն չի պահպանվել և եպազիր արձանագրություններում): Փաստորեն Հայաս և Ազգին հասարակական զարգացման ավելի բարձր մակարդակի վրա էին գտնվում, քան Նախի ցեղամիության մեջ մտնող երկրները, որոնցից ամեն մեկը թեև հասել էր թագավորության աստիճանի, բայց դեռ շարունակում էին ապրել իրարից բաժան-բաժան վիճակում և չէին հասել կենտրոնական պետություն առեղծելու աստիճանի:

Չնայած Հայաս երկիրը և Ազգի երկիրը ստեղծել էին միացյալ կենտրոնական պետություն, բայց այդ երկրների միջև լրիվ կոնսոլիդացումը չէր ավարտվել: Դա էր պատճառը, որ այդ պետությունը խեթական նվաճողների կողմից կոչվում էր ինչպես Հայաս երկիր, այնպես էլ Ազգի երկիր անուններով՝ կախված նրանց, թե խեթերն այդ երկրներից ո՞ր մեկի տարածքում էին նվաճումներ կատարում: Նրանցից Ազգին գտնվել է պետության հյուսիսում, այսինքն՝ Սև ծովից դեպի հարավ ընկած տարածությունում⁴: Դա հաստատվում է այն փաստով, որ Արիասա քաղաքը, որը գտնվել է Ազգի երկիր կազմում, տարածված էր Սև ծովի հարավային ափին: Բնականաբար Հայաս երկիրը տարածված է եղել պետության հարավում, այսինքն՝ Վերին Եփրատի ոլորանի հյուսիս-արևմտյան կողմերից մինչև Ազգի երկիր սահմանը⁵:

Խեթական պետությունը ձգտել է իրեն ենթարկել իր շրջակալքում գտնվող երկրները, նրանցից ստանալ ուազմական աջակցություն, պահպանել իր առաջնությունը ոչ միայն Փոքր Ասիայի, այլև Առաջավոր Ասիայի Ակատմամբ, հատկապես տապալել Միթաահ պետությունը, որն իր գլխավոր թշնամին էր: Այս նպատակով նա աշխատել է իր հպատակության տակ պահել նաև Հայաս-Ազգի պետությունը:

Սակայն Հայաս-Ազգին, սկսած իր քաղաքական ասպարեզ գալու արշալուսից, պայքարել է խեթական հզոր պետության դեմ հանուն իր անկախության: Իսկ դա էլ ստիպել է խեթական պետությանը զանազան միջոցներ գործադրել Հայաս-Ազգին իրեն ենթարկելու համար: Այդ միջոցներից են եղել ուազմական արշավանքները, դաշնագրերը, նամակագրությունները կամ բանագնացությունները և, վերջապես, խնամիական կապերը: Գործադրվող այդ միջոցներից զիսավորը եղել է ուազմական արշավանքը: Նման երկու արշավանքների է կազմակերպել խեթական պետության թագավոր Թության լիան Մամանակից, իր որդի Սուլայհիլուսիմաս I-ի հետ, երկու արշավանքներ էլ կազմակերպել է Սուլայհիլուսիմաս I-ի (1380-1340) որդի Մուրսիլիս II-ը (1340-1320): Առաջին երկու արշավանքների մասին տեղեկություններ են պահպանվել Սուլայհիլուսիմաս I-ի տարեգրութ-

⁴ И. М. Дьяконов, Предистория армянского народа, стр. 82-83, прим. 16.

⁵ И. М. Дьяконов, Предистория армянского народа, стр. 82-83, прим. 16.

յունու⁶, որը շարադրել է Արա որդի Մուրսիլիս II-ը, իսկ վերջին երկու արշավանքների մասից՝ Մուրսիլիս II-ի տարեգրությունու⁷, որը շարադրել է հենց ինքը՝ Մուրսիլիս II-ը: Եթե Թուրխալիաս III-ի և Սուպահլովիումաս I-ի առաջին արշավանքի հետ կապված ճակատամարտի վայրի մասին տեղեկություն չի պահպանվել, ապա երկրորդ արշավանքի հետ կապված ճակատամարտի վայրը եղել է Կումմախա քաղաքը: Այդ ժամանակ Հայաս-Ազգի թագավորն էր Կարամնիսը (այլ ընթերցում Լամնիս):

Ինչ վերաբերվում է Մուրսիլիս II-ի երկու արշավանքներին, ապա դրանցից առաջինը տեղի է ունեցել Արա թագավորության 7-րդ տարում, այսինքն՝ մ.թ.ա. 1334 թվականին, երբ խեթական գործը նախ պաշարում և ապա գրավում է Հայասա-Ազգի երկրի Ուրա ամրոցը, իսկ երկրորդը տեղի է ունեցել Արա թագավորության 10-րդ տարում, այսինքն՝ մ.թ.ա. 1331 թվականին, երբ Մուրսիլիս II-ն անձամբ առանց ճակատամարտի և անարգել կերպով մտնում է Հայասա-Ազգի երկիր և գրավում Արա Արիասա, Դուկկամմա (այլ ընթերցում Տուկկամմա) և Խալիմանա քաղաքները: Այդ ժամանակ Հայասա-Ազգի թագավորն էր Անհասը, որը Մուրսիլիս II-ի արշավանքի ժամանակ իր գործով լրում է երկիրը և չի հանդգնում ճակատամարտ տալ խեթական հզոր բանակի դեմ:

Խեթական պետության և Հայասա-Ազգի փոխարարերությունների մասին տեղեկություններ են պահպանվել նաև Սուպահլովիումաս I-ի և Միթամնի երկրի թագավոր Մարթիվազայի պայմանագրի⁸, ինչպես նաև Սուպահլովիումաս I-ի և Հայասա-Ազգի թագավոր Խուկկանասի (Հուկանաս) դաշնագրի⁹ տեքստերը: Սրանցից հատկապես ուշագրավ տեղեկություններ է պահպանել երկրորդը, որտեղ Սուպահլովիումաս I-ը խորհրդութ է տալիս Հայասա-Ազգի թագավոր Խուկկանասին, որ ես ուղարկի խեթական պետությունից Հայասա-Ազգի տարագրված մարդկանց և վերականգնի խեթական պետության սահմանները, որ խախտել էր Խուկկանասին նախորդող Հայասա-Ազգի թագավորը: Խեթական պետության և Հայասա-Ազգի փոխարարերությունների հարցում ուշադրություն է գրավում նաև այն փաստը, որ Սուպահլովիումաս I-ը իր քրոջը կնույշան է տալիս Խուկկանասին: Սուպահլովիումաս I-ի նախատակն էր, որ խմամիական այդ կապով Խուկկանասը ստիպված կլիներ լսել խեթական պետությանը և ամրաժեշտության դեպքում զինվորական օգնություն ցուց տալ Արան, այսինքն՝ Հայասա-Ազգի գործը, Արա հետևազորը և մարտակառքերը ծառալին խեթական բանակում: Դրանով, փաստորեն, Խուկկանասի պետությունը գրկվում էր ինքնուրուզնությունից և դառնում խեթական պետության կցորդը:

⁶ E. Forrer, Die Boghazköi-Texte in Umschrift, S. 42; E. Cavaignac, Les Annales de Subbiliuma, Strasburg, 1931; Revue des Etudes Anciennes, 1920, p. 229; H. G. Guterbock, The Deeds of Suppiluliumas Told by His Son, Mursilis II (Journal of Cuneiform Studies, X, 2-4, Leipzig, 1956).

⁷ A. Goetze, Die Annalen des Mursilis (Mittelungen der Vorderasiatisch-Aegyptischen Gesellschaft, Band 38, Leipzig, 1933); F. Hrozni, Die ersten zehn Regierungsjahre des Königs Mursilis II (Hethitische Keilschrift-Texte aus Boghazköi, Leipzig, 1919), S. 156-223.

⁸ E. Weidner, Politische Dokumente aus Kleinasien (Boghazköi Studien, herausgegeben von Otto Weber, 8 Heft, Leipzig, 1923).

⁹ J. Friedrich, Staatsverträge des Hethitischen Reiches (Mittelungen der Vorderasiatisch-Aegyptischen Gesellschaft, Band 34, Leipzig, 1930).

Դա, իբարեկ, լավ էր հասկանում Խուկանասը: Ուստի թեն նա առերես համաձայնվում է դաշնագրի պահանջների հետ, բայց հետո չի կատարում դրանք:

Ուշագրավ տեղեկություններ են պահպանել նաև Մուրսիլիս II-ի երեք նամակները՝ ուղղված Հայաստա-Ազգի թագավոր ԱԱԺիասին¹⁰: Դրանցից առաջինում և երկրորդում Մուրսիլիս II-ը գրում է ԱԱԺիասին, որ իր հոր, այսինքն՝ Սուպահլուլիումա I-ի ժամանակ, երբ վերջին գտնվելիս է եղել հեռավոր Միթանճի երկրում (այդ երկորի վրա կատարած արշավանքի պատճառով), օգտագործելով՝ առիթը ԱԱԺիասը հարձակվել է խեթական պետության Դամկուվա քաղաքի վրա, այնուղից տարել գերիներ և կողոպտել խոշոր ու մանր եղերավոր անասուններ: Մուրսիլիս II-ը առաջարկում է ԱԱԺիասին այդ գերիներն ու կողոպուտը ետ վերադարձնել, հակառակ դեպքում ինքը կմտնի Հայաստա-Ազգի երկիր և կավերի նրա բնակավայրերը, նրա տները, դաշտերը, խաղողի ալզիները, մարգագետինները, կտանի խոշոր ու մանր եղերավոր անասունները: Սակայն ԱԱԺիասը մերժում է նրա պահանջները, քանի որ նա ուզում էր խեթերից տարած գերիներն ու կողոպուտը փոխանակել Մուրսիլիս II-ի մոտ գտնվող հայաստական գերիներով, որին դեմ էր խեթական թագավորը: Խեթական զորքը, զորամիամանատար Նուվանզայի գլխավորությամբ, որը Մուրսիլիս II-ի եղբայրն էր, մտնում է Հայաստա-Ազգի, նախ պաշարում, ապա, հավանաբար, զրավում նրա Ուրա ամրոցը, որի անունը հետագա նվաճումների շարքում չի հիշատակվում: Երրորդ նամակը զրկել է ավելի ուշ՝ Մուրսիլիս II-ի կողմից Միթանճի երկրի վրա կատարված արշավանքից հետո: Այդ նամակում Մուրսիլիս II-ը գրում է ԱԱԺիասին, որ երբ ինքը մեկնել էր հեռավոր Միթանճի երկիր արշավանքի, ԱԱԺիասը, օգտագործելով առիթը, զրավել է խեթական պետության իստիտինա ամրոցն ու նրա մարզը և պաշարել Կառուվարան, տարել գերիներ ու կողոպուտ: Մուրսիլիսն առաջարկում է ԱԱԺիասին՝ վերադարձնել գերիներն ու կողոպուտը և վերականգնել խեթական պետության սահմանները: ԱԱԺիասը չի լսում նրան: Մուրսիլիս II-ը անձամբ զորքով մտնում է Հայաստա-Ազգի, զրավում նրա Արիասա, Դուկամանա և Խալիմանա քաղաքները: ԱԱԺիասը, ինչպես ընդգծվեց վերևում, վախենալով խեթական հզոր բանակից, ճակատամարտի չի դիմում և իր զորքի հետ լքում է երկիրը, իսկ Մուրսիլիս II-ի հետ բանակցություններ են վարում այդ քաղաքների ավագների խորհրդի անդամները (դրանցից էր Խալիմանա քաղաքի ավագների խորհրդի ներկայացուցիչ Մութթի(ս)ը): Այդ քաղաքների ավագների խորհրդի անդամները ընդունում են Մուրսիլիս II-ի պահանջները, համաձայնություն են տալիս ենթարկվել նրան, միայն թե նա չավերի իրենց բնակավայրերը, չգերի բնակչությանը, չկողոպտի երկիրը: Մուրսիլիս II-ը կատարում է նրանց խնդրանքը: Նա այդ քաղաքներից գերում է միայն 3000 մարդ և մտցնում իր զորքի մեջ, իսկ Հայաստա-Ազգիում տարագրվածներից են է բերում 1000 հոգու: Հայաստա-Ազգի երկիրը մտցվում է խեթական պետության կազմի մեջ՝ որպես նրա կցորդի:

Հետազոտում խեթական պետության թագավորներից Թութխալիաս IV-ի օրով (1260-1230), երբ վաղուց խեթական պետության հարվածների հետևանքով կործանվել էր Մի-

¹⁰ A. Goetze, Die Annalen des Mursilis (Mittelungen der Vorderasiatisch-Aegyptischen Gesellschaft, Band 38), Leipzig, 1932, S. 95-97; F. Hrozni, Die ersten zehn Regierungsjahre des Königs Mursilis II (Hethitische Keilschrift-Texte aus Boghazköi), Leipzig 1919, S. 156-223.

թամնի պետությունը, և դրանից օգտվելով հզորացել էր Ասորեստանի Աշխոր քաղաքի թագավորությունը. Առա թագավորներից Թուկովյի-Նինուրթա I-ը (1260-1230) անցնում է Բայկական Տավոսը և արշավում Նահիր ցեղամիլյան 43 թագավորությունների վրա, ճակատամարտում հաջթում Արանց թագավորներին ու դնում «Բավերժ ժամանակվով» հարկի տակ, այդ ժամանակ խեթական տեքստերում հիշատակվում է Հայաս-Ազգի՛ կաւկամների և Լուկայի հետ, որոնք բոլորն եւ դիտվում են որպես խեթական պետության թշնամի երկրներ: Խեթական թագավորը նախազգուշական միջոցներ է ձեռք առնում այդ երկրների հարձակման դեմ¹¹: Թուկովյի-Նինուրթա I-ը չի հանդնում անցնել Վերին Եփրատից արևմուտք և մունել Հայաս-Ազգի, որը զտնվում էր խեթական հզոր պետության հվածումների ոլորտում: Նա, առանց հզոր խեթական պետության իր դեմ գտնենելու, անարզել նվաճում է Նահիր ցեղամիլյունը, որը, ինչպես ընդգծված վերևում, տարածված էր Վերին Եփրատից արևելք:

Ուշազրավ է նաև հետազայում խեթական պետության վերջին թագավորներից մեկի՝ Բայկամարար Արանուվանտասի (1220-1190) պայմանագիրը¹², որը կնքվում է մի կողմից խեթական պետության, իսկ մյուս կողմից՝ Պախուվայի, Խոտվայի և այդ շրջանի մյուս երկրների միջև, բայց Հայաս-Ազգի երկրի անունը չի հիշատակվում: Ընդհակառակը, Հայաս-Ազգիի փոխարեն հիշատակվում են նրա Դուկկամա (Ծուկկամա), Պաթթեյարիկկա, Կումմախա քաղաքների, ինչպես նաև դրանցից առաջինի կառավարիչ Արիխապիցցիի և երկրորդի կառավարիչ Ախասիասի անունները: Այդ պայմանագրի համաձայն խեթական պետության հապատակության տակ է անցնում Պաթթեյարիկկան, իսկ Դուկկաման դիտվում է խեթական պետությունից կախում ունեցող քաղաք: Կումմախան հակադրվում է խեթական պետությանը: Վերջինիս թագավորը հարձակվում է այդ քաղաքի վոր և, հավանաբար, ենթարկում իրեն:

Փաստորեն Մուրսիլիս II-ի 10-րդ տարվա արշավանքից հետո Հայաս-Ազգի երկիրը տրոհվել է: Նրա կանգուն մնացած քաղաքները՝ Դուկկաման, Պաթթեյարիկկան և Կումմախան, հասել են ինքնակառավարման: Թեև այդ դեպքերից հետո մեկ անգամ հիշատակվել է այդ երկրի անունը (խոսքը վերոհիշյալ Թութխալիաս IV-ի ժամանակաշրջանի հետ կապված հիշատակության մասին է), բայց որա կրել է լոկ ձևական բնույթ: Իրականում այնուեղ միանական պետության փոխարեն առաջ էր եկել իրարից անկախ-անկախ քաղաքների կառավարումը:

Մ.թ.ա. XII դարի սկզբին, երբ անկում է ապրում խեթական պետությունը՝ Առ թափանցած ցեղային երկու երկրներից: Այդ պատճառով էլ նա շատ թույլ է եղել խեթական հզոր պետության համեմատությամբ: Որպես միանական պետություն քաղաքական ասպարեզում այն գոյատևել է ընդամենը 80 տարի (Մ.թ.ա. 1410 թվականից մինչև մ.թ.ա. 1331 թվակա-

¹¹ E. Forrer, Hayasa-Azzi (Caucasica, Leipzig, 1931, №9), S. 22.

¹² KUB, XXIII, №72; O. R. Gurney, Mita of Pahshuwa (Annals of Archaeology and Anthropology, University of Liverpool, XXVIII, 1948).

ը), որից հետո այն տրոհվել է: Մ.թ.ա. XII դարի սկզբից, երբ Կործանվում է խեթական պետությունը նոր թափանցող ցեղերից փոյուղիացիների հարվածների տակ, ընդմիշտ անկում են ապրում Հայաստ-Ազգի պետության կանգուն մնացած Դուկամա, Պաթենարիկա, Կումմախա քաղաքները, և պատմության թատերաբեմից ընդմիշտ անհետանում են նրանց անունները: Պատմության թատերաբեմից ընդմիշտ անհետանում է նաև երկրի Հայաստ-Ազգի անունը:

Պահպանվել են Հայաստ-Ազգի թագավորներից Կարաննիսի (Լանջիս), Խուկկանասի, Աննիսի անունները: Ենթադրվում է, որ նրա թագավորներից է եղել նաև ոմն Մարիաը, որը քաղաքական ասպարեզում հանդես է եկել Խուկկանասից առաջ: Հայաստ-Ազգի անձնանուններից հիշատակվել է նաև մեկ ուրիշ Մարիասի անունը, որը քաղաքական ասպարեզում հանդես է եկել Աննիսի ժամանակ: Այդ երկրի անձնանուններից են նաև Խալիմանայի ավագների խորհրդի անդամ Մութեհ(ս), ինչպես նաև Պաթենարիկայի կառավարիչ Արիխապիցցիի, Դուկկամայի կառավարիչ Ախսիասի անունները: Մեզ են հասել Հայաստ-Ազգի Կամմախա (տարբերակ՝ Կամոխա), Ուրա, Խնգալավա, Արիայսա, Դուկկամմա (Տուկկամմա), Խալիմանա, Փաղեռու, Լախիրիխիլա, Արճիյա, Պախութեա, Թամադտա, Գազու, Արխիթա, Բարրայա, Գաշմիախա քաղաքների, ամրոցների և այլ բնակավայրերի անունները: Հայաստ-Ազգին ունեցել է սեփական կրոն: Այն եղել է բազմատվածային, ինչպիսին էր խեթական կրոնը: Պահպանվել են նրա պանթեոննի (ոհցարանի) մեջ մտնող Ուզուր, Խշար, Զազգա, Թնշուր, Թարումուշ, Թնրիդիթունի, Ունագաշթաշ, Գազշաննաշ, Բալթաիկ, Ունագաշթուշ, Խուխուշ, Սիլլի աստվածների անունները¹³:

Հայաստ-Ազգին ունեցել է նաև զարգացած տնտեսություն, որի գլխավոր ճյուղերից են եղել դաշտավարությունը, խաղողագործությունը, անասնապահությունը, մարտակառքների պատրաստումը և դրա հետո կապված ձիարուծությունը: Հայաստ-Ազգիիում իշխել են հիմարնելյան տիպի ուզմա-դեմոկրատական կարգեր, որի պատճառով էլ այնտեղ ապաստան են գտել խեթական փախստականները:

Հայաստ-Ազգի բնակչության էթնիկական պատկանելության վերոբիշյալ մեր ենթադրությունը, թե այն ծագում է շումերա-աքքադական դարաշրջանի Խաթեն կամ Հայ մայր ցեղից և ունի հնդեվրոպական, մասնավորապես հայկական ծագում, հիմնավորվում է նաև այդ պետության տեղանունների, անձնանունների և դիցանունների ստուգաբանության միջոցով: Հետազոտողներից Գ. Ա. Ղափանցյանի¹⁴ կարծիքով այդ անունների հիմքում ընկած են ինչպես խեթական, խուրիական, անգամ սեմական, այնպես էլ հայկական արմատներ: Ուսումնասիրությունները ցուց են տալիս, որ համեմատաբար ավելի շատ տեղանուններ, անձնանուններ և դիցանուններ ունեն հայկական ծագում: Այսպես, օրինակ՝ Ազգի ցեղատեղանվան հիմքում ընկած է հավերենի «ազի» (մայր, մայրիկ) արմատը, որով կազմվել են հայոց տեղանուններ (Ազիար, Ազիրամ), Արիասա տեղանվան հիմքում՝ հայերենի «արի» կամ «արիի» (արև, արևածագ, լուսաշող, արևաշող) արմատը, որով կազմվել են հայոց տեղանուններ (Արփ, Արփա, Արփագետի, Արփակ, Արփաշեն, Արփավետ,

¹³ Ն. Աղոնց, Հայաստանի պատմություն, էջ 46-47:

¹⁴ Г. А. Капанян, Хайаса-колибелъ армян (Историко-лингвистические Работы, Ереван, 1956), стр. 11-122.

Արփառու, Արփենի, Արփի, Արփմի, Արփսու, Արփումշ), Կումմախան տեղանվան հիմքում հայերենի «կմախ(ք)» (որևէ ճախմական հիմք, շինության, շինվածքի ներքին հիմնամաս, մարդու և կենդամիների ուսկրութերի ամբողջություն) արմատը, որով կազմվել են հայոց տեղանուններ (Կմախք), Ուրա տեղանվան հիմքում հայերենի «ուր» կամ «ուռ» (ուրազիւների ընտանիքին պատկանող ծառատեսակ) արմատը, որով կազմվել են հայոց տեղանուններ (Ուրուտ, Ուրուտան, Ուրուտի-անապատ, Ուրուտի ձոր), Տուկամնա տեղանվան հիմքում հայերենի «տուկալ» (դիմանալ, համբերել, հաստատուն, ամստրոտակ) արմատը, որով կազմվել են հայոց տեղանուններ (Տոկ, Տոկալ), Արնիյա տեղանվան հիմքում հայերենի առմատ (արարված, շինված) բառի «առն» արմատը, որով կազմվել են հայոց տեղանուններ (Առնա, Առնավա, Առնե, Առնիկ, Առնիս, Առնիստ, Առնու), Գազու տեղանվան հիմքում հայոց «զազ» (ակցան) արմատը, որով կազմվել են հայոց տեղանուններ (Գազ, Գազա, Գազուկ, Գազպի), Բարյայ տեղանվան հիմքում հայոց «բարի» (լավ, ընտիր) արմատը, որով կազմվել են հայոց տեղանուններ (Բարի, Բարիկ, Բարինոր, Բարիք, Բարեբեր), Զազգա(նի) դիցանվան հիմքում հայերենի «ձազ» արմատը, Թարուուունա դիցանվան հիմքում հայերենի «թարու» արմատը, Թերիտիտունա դիցանվան հիմքում հայերենի «թերի» և «տուտ» (մի բանի ծայրը կամ վերջը, ազի, պոչ) արմատները, Բալտակի դիցանվան հիմքում հայերենի «բաղտ» արմատը և «իկ» ածանցը, Ուգուր դիցանվան հիմքում հայերենի «ոգոր(իլ)» (կովել, մարտնչել) արմատը, Մարիյա անձնանվան հիմքում հայերենի «մայրի» (եղնանի, սենազգիների ընտանիքին պատկանող մշտադար ծառատեսակ) արմատը, Խուկաննա անձնանվան հիմքում հայերենի «խուկալ» (մտածել, խորին) արմատը, Կարագի անձնանվան հիմքում հայերենի «կար» (կարենալ) արմատը, Ասիա անձնանվան հիմքում հայերենի «աս» (ասող, բանական) արմատը:

Լեզվական այս փաստերն իրենց հերթին ցուց են տալիս, որ Հայաստ-Ազգի պետության բնակիչներն իրոք հիմնականում եղել են հայակեզոյ ցեղերը, հայերը կամ արմենները, իսկ Հայաստ-Ազգին եղել է հայկական պետություն: Այս շատ կարևոր փաստերը ցուց են տալիս, որ Հայաստ պետության բնակչությունը ծագում է շումերա-աքքադական դարաշրջանի Խաթեն կամ Հայ մայր ցեղից: Հայաստան, փաստուեն, ինչպես իր անունով, այնպես էլ իր էթնիկական կազմով ի սկզբանե եղել է շումերա-աքքադական դարաշրջանի Խաթեն կամ Հայ մայր ցեղի ժառանգորդներից:

Այսպիսով, Խայաշա-Ազգիի պետությունը քաղաքական ասպարեզ է եղել մ.թ.ա. XV դ. վերջին և անկում է ապրել մ.թ.ա. XI դ. սկզբին: Նրան արևմուտքից սահմանակից են եղել խեթական պետությունը և կասկերի երկիրը, արևելքից՝ Ասրին Եփրատի ծախս ափին փարածված Նախիք ցեղամիությունը, Էյսուսիացից՝ Սև ծովը, Խարավից՝ Փոքր Հայքը, ուր հետագայում հիշարքակվել է ուրարդական արձանագրությունների Խաթեն ցեղամիությունը: Էթնիկապես այն կապված է եղել շումերա-աքքադական դարաշրջանի Խաթեն կամ Հայ մայր ցեղի հետ և իր հայ բնակչությամբ համարվել է նրա հյուսիս-արևելյան շարունակությունը: Իր քաղաքական ասպարեզ զայլու սկզբի 80 դարիներին (մ.թ.ա. 1410-1331 թթ.) այն եղել է անկախ պետություն, իսկ դրանից հետո, երբ կորցրել է իր պետականությունը, ենթարկվել է խեթական պետությանն ու նրա հետ է անկում է ապրել նոր թափանցող ցեղերի հարվածների փակ: